

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր

Կոռուպցիան Հայաստանում 2008թ.

Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության վերլուծություն

**Հասարակական կարծիքի առաջատարների դերը
կոռուպցիայի դեմ պայքարում**

Վերլուծությունը՝ Էլմիրա Բախշինյանի

ԵՐԵՎԱՆ

2009

Ներածություն

Անցումային ժամանակահատվածում Հայաստանում արձանագրված կոռուպցիան այսօր էլ շարունակում է իր բացասական ազդեցությունն ունենալ երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացումների վրա: Կոռուպցիայի երևույթը բազմաշերտ է և ընդգրկում: Կոռուպցիայի դեմ պայքարը չի կարող սահմանափակվել զուտ կաշառակերության հանցակազմի սահմանմամբ և համապատասխան սանկցիաների կիրառմամբ: Կոռուպցիայի հասկացությունն ավելի լայն է և ներառում է նաև հովանավորչությունը, իշխանազանցությունը և այլն: Կոռուպցիան հակիրճ սահմանվում է որպես «իշխանության լիազորությունների, իրավասությունների չարաշահումը կամ օգտագործումը ի նպաստ մասնավոր/անձնական շահի»: Հետևաբար հակակոռուպցիոն բարեփոխումները պետք է բացահայտորեն աջակցություն ստանան վերևից, բարոյական բարձր նորմերով թելադրված վարքագիծն ու գործելակերպը պետք է ապահովվի և խրախուսվի բոլոր մակարդակների վրա:

2003թ-ին Հայաստանում հաստատվել է Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, իսկ 2004թ-ից գործում են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը և դրան առընթեր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը: Դրան զուգահեռ՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել են մի շարք միջազգային կոնվենցիաներ և Հանրապետությունն անդամակցել հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող միջազգային կառույցներին: Վերջին մի քանի տարվա ընթացքում ընդունվել են մեծ քանակությամբ օրենքներ, որոնք միտված են կանխարգելելու կոռուպցիայի տարածումը: Սակայն ձեռնարկված հակակոռուպցիոն բարեփոխումները չեն կարող հաջողությամբ պսակվել, եթե չկա ցանկացած մակարդակում կոռուպցիայի համար խթան հանդիսացող նախապայմանների, հնարավորությունների և լծակների գիտակցում և դրանց հաղթահարմանն ուղղված նպատակային գործունեության իրականացում: Մինչդեռ վերջին տարիներին երկրում իրականացված հետազոտությունների և հաշվետվությունների արդյունքները հուսադրող չեն:

2006թ-ին լույս տեսած Համաշխարհային Բանկի «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում. Ո՞վ է հասել հաջողությունների... և ինչո՞ւ» հաշվետվության համաձայն՝ Հայաստանում կոռուպցիայի հետ կապված իրավիճակը 2005թ-ին, 2002թ-ի համեմատ, զգալիորեն վատթարացել է մի շարք չափանիշներով¹:

«Ֆրիդոմ Հաուզ» (Freedom House) կազմակերպության 2006թ-ին հրապարակած ուսումնասիրության տվյալների համաձայն, որոնք ամփոփվել են «Անցումային երկրները» հաշվետվության մեջ՝ 1999թ-ից ի վեր Հայաստանում կոռուպցիայի հետ կապված իրավիճակի գնահատականը չի փոխվել՝ մնալով 5.75: Այստեղ օգտագործվել է «1-7» սանդղակը, որտեղ 7-ը նշանակում է բացարձակ կոռունպացված, իսկ 1-ը՝ «մաքուր»²:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության կողմից սույն թվականի սեպտեմբերի 23-ին հրապարակվել է «2009թ. Կոռուպցիայի համաշխարհային զեկույցը»³, որում ներառված է հոդված Հայաստանի վերաբերյալ: Չեկույցի համաձայն՝ Կոռուպցիայի ընկալման համաթիվը 2008-ին, (ԿԸՀ ցույց է

¹ Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում. Ո՞վ է հասել հաջողությունների... և ինչո՞ւ», Համաշխարհային Բանկի հաշվետվություն, 2006թ., էջ 63:

² «Հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանում» Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան, 2006թ., էջ 8:

³ Էլեկտրոնային կայք, <http://www.transparency.am/gcr.php>

տալիս հանրային ոլորտներում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակը) Հայաստանի համար 2.9 է: Հայաստանն աշխարհի 180 երկրների շարքում 109-րդ տեղն է զբաղեցնում՝ նախորդ տարվա համեմատությամբ արձանագրելով ընդամենը 0.1 կետի աճ:

Նույն կազմակերպության կողմից «Կոռուպցիայի ընկալումները Հայաստանում, 2007թ.» հեռախոսային հարցման արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ հարցվածների 62.9%-ը համարել է, որ վերջին երեք տարում Հայաստանում կոռուպցիան աճել է⁴:

Սակայն ուշադրության է արժանի այն փաստը, որ կոռուպցիոն գործընթացներում հասարակությունն է ակտիվ մասնակից հանդիսանում: Այս հանգամանքն ընդգծվում է նաև կատարված հետազոտություններում: Մասնավորապես՝ «Տեղեկատվությունը հանուն ժողովրդավարության» կազմակերպության կողմից Հայաստանի մասին պատրաստված հաշվետվության մեջ նշվում է, որ Հայաստանում այսօր առկա է «մանր» կամ «գոյատևման» կոռուպցիայի բարձր մակարդակ, որը դիտվում է որպես սոցիալական նորմ: Այս գործընթացում հասարակությունն ակտիվ մասնակից է հանդիսանում: Ցավոք, երբ խոսվում է կոռուպցիայի մասին, շեշտադրվում է բարձր մակարդակում և կառավարությունում առկա իրավիճակը, բայց գործնականում, կոռուպցիան առկա է նաև ցածր մակարդակներում: Բնակչության զգալի մասը կոռուպցիայի հետ կապված հանցավորությունների մի կողմն է հանդիսանում⁵:

Ոլորտում առկա բոլոր միջազգային և տեղական ուսումնասիրություններն ու փաստաթղթերը փաստում են կոռուպցիայի դեմ պայքարում համընդգրկուն մոտեցման կիրառման և հանրային աջակցության ապահովման անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում նշվում է, որ ՀՀ Հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով Կառավարությունը 2009-2012 թթ. շարունակելու է հետևողականորեն ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարում հանրային աջակցություն՝ քաղաքացիական հասարակության գործուն մասնակցության և հանրային քարոզչության միջոցով⁶:

Միաժամանակ շեշտվում է այսօր Հայաստանում հանրային գիտակցության մեջ առկա կոռուպցիայի վտանգավորության աստիճանի թերազնահատման և հանդուրժողականության վերացման անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի մշակած արտաքին հաղորդակցության ռազմավարությունն ընդգծում է հանրության վստահության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ ներգրավելով հանրությանը կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, բարձրացնելով մարդկանց կրթամակարդակը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ, ինչպես նաև, բացատրելով նրանց, թե ինչպես պետք է հնարավորինս արդյունավետ կերպով պայքարել կոռուպցիայի դեմ⁷:

Ջերեմի Պոպի մշակած տեղեկագիր-ձեռնարկի մեջ հստակ նշվում է ժողովրդի կողմից կոռուպցիայի՝ որպես կյանքի նորմի ընկալման և բնակչության ընդհանուր համակերպվածության մթնոլորտի հաղթահարման անհրաժեշտությունը: Նշվում է նաև, որ բոլոր հակակոռուպցիոն միջոցառումների համար ընդհանուր գործոն է

⁴ Էլեկտրոնային կայք, <http://www.transparency.am/publications.php?offset=20>

⁵ “Armenia: Perspectives of Modernisation In the Light of Corruption and Public Administration” The report is prepared by an INDEM Fund Team, G. Satarov (team leader), M. Krasnov, M. Levin, B. Rimski
http://www.stopcorruption.am/main/upload.php?lng_id=3

⁶ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիր, 2009, Էլեկտրոնային կայք, <http://www.gov.am/anticorruption/>


⁷ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր, Ծրագրի տեղեկագիր, Հոկտեմբեր 2007թ., Սարտ, Թիվ 1, Թողարկում 1:

հանդիսանում հասարակության աջակցության անհրաժեշտությունը՝ անկախ միջոցառումների ուղղվածությունից⁸: Հակակոռուպցիոն «արշավները» հաջողությամբ չեն պսակվի, եթե հասարակությունը չաջակցի դրանց: Սարդիկ պետք է հասկանան կոռուպցիայի հիմնախնդրի լրջությունը և այն լուծելու ուղիները: Քաղաքացիները՝ որպես բարեփոխումներից օգտվողներ, չպետք է գրավեն բարեփոխումների արդյունքները քաղողի պասիվ դիրք, այլ՝ հանդես գան որպես բարեփոխումների ակտիվ ջատագույններ և ամբողջ գործընթացի հսկիչներ:

Հասարակության կարծիքի և առկա կարծրատիպերի փոփոխման հասնելը բարդ ու ժամանակատար խնդիր է, ուստի առաջադրված նպատակներին առավել դյուրին է հասնել հասարական կարծիքի առաջատարներին հայտնաբերելու ու նրանց ուղղված նպատակային գործունեություն ծավալելու միջոցով: Այս առումով կարելի է օգտագործել «Նորարարությունների տարածումը» հետազոտական ավանդույթը⁹:

Նորարարությունների տարածումը հետազոտական ավանդույթը բացատրում է, թե ինչպես են նորարարություններն որդեգրվում որևէ համայնքի կողմից: Այս առումով, հանրային գիտակցության մեջ կոռուպցիայի վտանգավորության աստիճանի գիտակցումն ու անհանդուժողականությունը կոռուպցիայի նկատմամբ, նորարարություններ են, որոնք իրենց տարածումն են փորձում գտնել հայ իրականության մեջ: Ինչպես ցույց են տալիս Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից 2008թ-ին անցկացված Հանրային կարծիքի հետազոտության համառոտ վերլուծության արդյունքները, ցավոք այսօր հարցվողների գերակշիռ մասը (51%-ը) նշել են, որ անձամբ իրենք ոչինչ չեն կարող անել Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար: Սակայն նորարարությունների տարածման հետազոտությունների կարևոր հայտնաբերումներից մեկն էլ այն էր, որ համայնքում նոր գաղափարի որդեգրումը սովորաբար տեղի է ունենում S-աձև կորագծով:

Պատկեր 1



⁸ Ջերեմի Պոպ «Դիմակայելով կոռուպցիային. Ազգային ազնվության և օրինականության համակարգի տարրերը» տեղեկագիր-ձեռնարկ, 2002թ. <http://www.transparency.am/publications.php?offset=20>

⁹ Է.Մ. Ռոջերս, «Նորարարությունների տարածումը», Նյու Յորք, «Ֆրի փրես», 2003թ.

Կորի այդ ձևն ունենալու պատճառը մարդկանց տարբեր կատիգորիաներն են, որոնք նորարարությունները որդեգրում են տարբեր ժամանակահատվածներում: Հետազոտություններից նաև պարզվել է, որ գոյություն ունի զգալի միասնականություն մարդկանց այն տեսակներում, ովքեր նորարարությունները որդեգրում են վաղ կամ ուշ:

Նորարարությունների տարածումը հետազոտական ավանդույթում առանձնացվում է նոր գաղափարը որդեգրողների հինգ խումբ՝ **Նորարարներ, Վաղ որդեգրողներ, Վաղ մեծամասնություն, Ուշ մեծամասնություն և Դանդաղկոտներ**: Հասարակության կարծիքի առաջատարները համարվում են վաղ որդեգրողները: Կախված տարբեր հիմնախնդիրներից՝ վաղ որդեգրողները կարող են լինել ավելի շատ կրթված, քան նրանց հետևողները, քաղաքաբնակ, քան գյուղաբնակ, ունենան ավելի բարձր տնտեսական դիրք, նրանց ավելի հասանելի լինեն ՁԼՄ-ները: Սակայն գրականության մեջ նշվում է, որ տարիքային և սեռային տարբերությունները վճռորոշ չեն:

Վերլուծության հիպոթեզը և նպատակը

Սույն ուսումնասիրության հիմքում դրված է այն հիպոթեզը, որ այսօր Հայաստանում առկա կոռուպցիայի վտանգավորության աստիճանի թերազնահատումն և հանդուժողականությունը վերացնելու համար անհրաժեշտ է հայտնաբերել հասարական կարծիքի առաջատարներին ու նրանց ուղղված նպատակային գործունեություն ծավալել:

Սույն վերլուծությունը նպատակ ունի պարզել, թե կա՞նք արդյոք այսօր Հայաստանում հասարակական կարծիքի առաջատարներ, այլ կերպ ասած՝ «Վաղ որդեգրողներ», ովքեր արդեն իսկ գիտակցում են կոռուպցիայի վտանգավորությունը, անհանդուժողականորեն են տրամադրված երևույթի նկատմամբ և պատրաստ են կոնկրետ պրոակտիվ քայլեր ձեռնարկել՝ կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար:

Արդյո՞ք «Վաղ որդեգրողներ» խմբին պատկանելությունը պայմանավորված է

- հիմնախնդրի մասին մարդկանց կրթամակարդակով/ տեղեկացվածությամբ
- Հայաստանում հակակոռուպցիոն գործունեության մասին տեղեկացվածությամբ
- կոռուպցիայի հետ առնչվելու սեփական փորձով
- ՁԼՄ-ների հասանելությամբ
- բնակության վայրով (քաղաքային, գյուղական)
- սեռային, տարիքային պատկանելությամբ
- կրթության մակարդակով
- զբաղվածության բնույթով
- ֆինանսական վիճակով
- սոցիալական կապերով
- կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումներով:

Վերլուծության մեթոդաբանություն

Սույն վերլուծության ընթացքում «Վաղ որդեգրողներին» առանձնացնելու և այդ խմբին՝ հարցվողների պատկանելությունը պայմանավորող գործոններն ի հայտ բերելու համար օգտագործվել են ռեգրեսիոն մոդելներ: Ռեգրեսիոն մոդելների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն փոխկապվածության (correlation), որը բնորոշում է երկու փոփոխականների միջև առկա կապի ուժը,

ձեզրեսիոն վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզել այդ կապի բնույթը և կանխատեսել, թե որքանով կարող է փոխվել մի փոփոխականը (կախյալ), մյուս փոփոխականի/փոփոխականների (անկախ) փոփոխման պարագայում:

Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության արդյունքում ստացված տվյալների վերլուծության ընթացքում որպես *կախյալ* փոփոխականներ դիտարկվել են այն հարցերը, որոնք չափում են կոռուպցիայի վտանգավորության աստիճանի գիտակցումը հարցվողների կողմից, նրանց անհանդուժողականությունը երևույթի նկատմամբ, կոնկրետ պրոակտիվ քայլեր ձեռնարկելու պատրաստականությունը՝ կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար: Որպես *անկախ* փոփոխականներ՝ դիտարկվել են հարցվողների տարիքը, սեռը, բնակության վայրը, զբաղվածության բնույթը, սոցիալական կապերի առկայությունը, ֆինանսական վիճակը, ՁԼՄ-ների հասանելիությունը, կրթության մակարդակը, կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումները:

Հանրային կարծիքի հետազոտության ժամանակ հարցաթերթում կիրառված այն հարցերը, որոնք հնարավորություն են տալիս չափել հարցվողների կողմից կոռուպցիայի վտանգավորության աստիճանի գիտակցումը, նրանց անհանդուժողականությունը և այլն, այսինքն՝ կախյալ փոփոխականները, կան նոմինալ, կան օրդինալ սանդղակներ են պարունակել: Նման դեպքերում գծային ձեզրեսիոն մոդելներ կիրառել հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով, հարցաթերթում ընդգրկված հարցերը նախ խմբավորվել են՝ ստեղծելով զույգային կախյալ փոփոխականներ, որից հետո օգտագործվել է լոգիստիկ ձեզրեսիոն մոդելը (binary logistic regression):

Լոգիստիկ ձեզրեսիա կարելի է կիրառել, եթե պահպանվում են հետևյալ պայմանները

- կատարվել է ներկայացուցչական պատահական ընտրություն ավելի լայն համախմբությունից
- յուրաքանչյուր ընտրություն կատարվել է մյուսներից անկախ
- յուրաքանչյուր կոնկրետ փոփոխական մյուս փոփոխականների բոլոր արժեքների վրա ազդում է հավասարապես:

Հանրային կարծիքի հետազոտության ժամանակ կատարված ներկայացուցչական պատահական ընտրանքը լիովին հնարավորություն է տալիս վերլուծության ժամանակ կիրառել տվյալ ձեզրեսիոն մոդելը:

Ինչպես նշվեց վերևում, վերլուծության համար հարցաթերթում ներառված հարցերը մի շարք խմբավորումների են ենթարկվել, ինչպես նաև տվյալների բազայում կատարվել են որոշակի փոփոխություններ: Հավելված 1-ում ներկայացված են կատարված փոփոխություններն ավելի մանրամասն յուրաքանչյուր փոփոխականի համար:

Վերլուծության արդյունքում ստացված տվյալներ

Վերլուծության սկզբում ուսումնասիրվել է այն փոփոխականների միջև առկա փոխկապվածությունը, որոնք ի սկզբանե նախատեսված էին օգտագործել որպես կախյալ փոփոխականներ: Քանի որ այդ բոլոր փոփոխականները նոմինալ սանդղակ էին պարունակում, կիրառվել է կորելյացիայի հաշվարկման Սպիրմանի բանաձևը, ինչպես նաև Խի քառակուսի գործակիցը: Ըստ այդմ, սերտ փոխկապվածություն գոյություն ունի կոռուպցիայի դեմ պայքարի մասնակցությունը գնահատող հարցի (Q33) և մի քանի այլ հարցերի միջև:

Տվյալ փոփոխականների միջև փոխկապակցվածությունն արտահայտվում է հետևյալ կերպ:

- Այն մարդիկ, ովքեր հետաքրքրված են քաղաքականությամբ և պետական կառավարման համակարգով, ավելի հակված են մասնակցություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում: Այսպես՝ «Քաղաքականությամբ հետաքրքրվածների» 52,9%-ն է պատկանում «Կոռուպցիայի դեմ պայքարողների» խմբին, այն դեպքում, երբ «Քաղաքականությամբ չհետաքրքրվածների» միայն 40,5%-ն է պատկանում նույն խմբին:
- Այն մարդիկ, ովքեր պատրաստ են կաշառք չվերցնել, պատրաստ են նաև մասնակցություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում: Այսպես՝ «Կաշառքից հրաժարվողների» 51,2%-ն է նշել առնվազն մեկ քայլ, որ իրենք կարող են ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար, իսկ «Կաշառքից չհրաժարվողների»՝ 39,4%-ը:
- «Հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնողների» 52,1%-ն է պատկանում «Կոռուպցիայի դեմ պայքարողների» խմբին, այն դեպքում, երբ «Հակակոռուպցիոն քայլեր չնախաձեռնողների» միայն 17,2%-ն է պատկանում նույն խմբին:
- Նույնը կարելի է նշել նաև հակակոռուպցիոն քայլեր արդեն նախաձեռնած անձանց մասին: Հակակոռուպցիոն քայլեր արդեն նախաձեռնած անձանց 55,1%-ն է նշել առնվազն մեկ քայլ, որ իրենք կարող են ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար, իսկ չնախաձեռնածների՝ 40,2%-ը:
- Արդեն պրոակտիվ քայլեր կատարված անձանց 58,8%-ն է պատկանում «Կոռուպցիայի դեմ պայքարողների» խմբին, իսկ պրոակտիվ քայլեր չկատարած անձանց՝ 42,6%-ը:

Վերլուծության ընթացքում դուրս են բերվել նաև մի շարք այլ փոխկապվածություններ քաղաքականությամբ և պետական կառավարման համակարգով հետաքրքրվածության և կատարված պրոակտիվ քայլերի, կոռուպցիան՝ որպես շատ լուրջ երևույթ գնահատման և կոռուպցիան կրճատելու հնարավորության մասին պատկերացումների, ինչպես նաև մի շարք այլ փոփոխականների միջև:

Նշված փոփոխականների միջև առկա կապի բնույթը պարզելու համար կիրառվել է լոգիստիկ ռեգրեսիոն մոդելը: Որպես կախյալ փոփոխական՝ սկզբում օգտագործվել է կոռուպցիայի դեմ պայքարում մարդկանց մասնակցությունը գնահատող հարցը (Q33), որը առավելագույնս է կապված կոռուպցիայի ընկալումները բնորոշող մյուս հարցերի հետ: Սույն վերլուծության ընթացքում կիրառված լոգիստիկ ռեգրեսիոն մոդելների և ստացված քանակական տվյալների մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը բերված է Հավելված 2-ում:

Յուրաքանչյուր փոփոխականի նշանակալիությունը մոդելում չափվում է օգտագործելով Վալդի վիճակագրությունը: Յուրաքանչյուր առանձին նշանակալիության p արժեք ստուգում է այն գրոյական վարկածը, որ տվյալ փոփոխականի շանսերի գործակիցը (odds ratio) հավասար է 1-ի գլխավոր համախմբության համար: Այլ կերպ՝ գրոյական վարկածն այն է, որ փոխկապվածություն չկա տվյալ կոնկրետ փոփոխականի և կոռուպցիայի դեմ պայքարում մարդկանց մասնակցության միջև: Օգտագործելով $p=0.10$ ՝ որպես փոփոխականը հավասարման մեջ չընդգրկելու ծայրագույն կետ, կարելի է տեսնել, որ (Q5_NEW) Կոռուպցիայի լրջության գնահատումը ($p=0,517$), (Q15_NEW) Կոռուպցիոն դրսևորումների ընկալումները ($p=0,831$) և (Q30_NEW) Կոռուպցիոն գործընթացների մեջ չընդգրկվելու պատրաստականությունը ($p=0,477$), կանխատեսող փոփոխականներ չեն հանդիսանում: Այն հանգամանքը, որ կոնկրետ ինչ-որ փոփոխական հավասարման մեջ չի ընդգրկվում, չի նշանակում, որ կախյալ փոփոխականի հետ ընդհանրապես փոխկապվածություն գոյություն չունի: Այդ հանգամանքը նշանակում է, որ այդ փոփոխականները կանխատեսող փոփոխականներ չեն հանդիսանում տվյալ մոդելում:

Ընդ որում, կարելի է հստակ նշել, որ փոփոխականները մոդելի մեջ ներմուծելու արդյունքում մոդելը ավելի լավացել է, քանի որ առանց անկախ փոփոխականների, մոդելը 54,3%-ով է ճիշտ կանխատեսում կատարել, իսկ վերջին՝ չորրորդ քայլի ժամանակ՝ 62, 9%-ով: Բացի այդ Յոսմեր և Լեմեշով թեսթի արդյունքները ցույց են տալիս, որ փոքրացող խի քառակուսի գործակցի արժեքը և մեծացող նշանակալիությունը փաստում են փոփոխականների ներմուծման հետ մեկտեղ մոդելի լավացման մասին:

Մոդելի արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ

- «*Հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնած*» հարցվողների շանսերը կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցելու 1,26 անգամ ավելի մեծ են, քան համապատասխանաբար «*Հակակոռուպցիոն քայլեր չնախաձեռնած*» հարցվողների շանսերը:
- Ապագայում «*Հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնող*» հարցվողների շանսերը կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցելու 4,66 անգամ ավելի մեծ են, քան համապատասխանաբար «*Հակակոռուպցիոն քայլեր չնախաձեռնող*» հարցվողների շանսերը:
- «*Կաշառքից հրաժարվող*» հարցվողների շանսերը 1,493 անգամ, իսկ «*Կաշառք չտվող*» հարցվողների շանսերը կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցելու 1,34 անգամ ավելի մեծ են, քան համապատասխանաբար «*Կաշառքից չհրաժարվող*» և «*Կաշառք տվող*» հարցվողների շանսերը:
- «*Քաղաքականությամբ հետաքրքրվածների*» շանսերը մեծ են 1,553 անգամ, իսկ «*Պրոնակտիվ քայլեր կատարածների*»՝ 1,702 անգամ:

Այսպիսով, մոդելի կիրառումը հնարավորություն տվեց պարզել, որ այսօր Հայաստանում արդեն կան հասարակական կարծիքի առաջատարներ, այլ կերպ ասած՝ «Վաղ որդեգրողներ», ովքեր հետաքրքրված են քաղաքականությամբ, պատրաստ են հրաժարվել կաշառք տալուց ու վերցնելուց, նախաձեռնել հակակոռուպցիոն միջոցառումներ և մասնակցել կոռուպցիայի դեմ պայքարին: Ինչպես նաև, վերլուծության արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս փաստել, որ կա սերտ փոխկապվածություն վերը նշված գործոնների միջև:

Ինչ վերաբերում է «Վաղ որդեգրողներ» խմբին պատկանելությունը պայմանավորող գործոնների ուսումնասիրմանը, ապա վերը նշված մոդելի արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ այդ նպատակով, որպես կախյալ փոփոխական, նորից կարելի է օգտագործել կոռուպցիայի դեմ պայքարի մասնակցությունը գնահատող հարցը (Q33), ինչպես նաև Q42 հարցը, քանի որ «*Հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնող*» հարցվողների շանսերը կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցելու ավելի մեծ են:

«Վաղ որդեգրողներ» խմբին պատկանելությունը պայմանավորող գործոնների ուսումնասիրման համար կիրառվել է նոր ռեգրեսիոն մոդել, որի մեջ ներառվել են հետևյալ հարցերը.

- Հարցվողների տարիքը (AGE_GR)
- Բնակության վայրը (URBAN)
- Ձբաղվածության բնույթը (EMP_GR)
- Սոցիալական կապերի առկայությունը (SOC_REL)
- ՁԼՄ-ների հասանելիությունը
- Հեռուստաալիքների հասանելիությունը (TV)
- Ռադիոյի հասանելիությունը (RADIO)
- Թերթերի հասանելիությունը (DAILY)
- Ինտերնետի հասանելիությունը (INTERNET)
- Կրթության մակարդակը (EDU_GR)

- Կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումները (Q62)
- Ֆինանսական վիճակը (D9)
- Սեռը (D1)

Մոդելի կիրառման արդյունքում ստացվում է, որ ստորև նշված գործոնները կանխատեսող փոփոխականներ չեն հանդիսանում:

- ($p=0,94$) Կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումները (Q62)
- ($p=0,84$) Սոցիալական կապերի առկայությունը (SOC_REL)
- ($p=0,96$) Ռադիոյի հասանելիությունը (RADIO)
- ($p=0,74$) Հեռուստատվիքների հասանելիությունը (TV)
- ($p=0,31$) Ձբաղվածության բնույթը (EMP_GR)
- ($p=0,88$) Սեռը (D1)

Այս դեպքում ևս փոփոխականները մոդելի մեջ ներմուծելու արդյունքում մոդելն ավելի լավացել է, քանի որ առանց անկախ փոփոխականների, մոդելը 52,9%-ով է ճիշտ կանխատեսում կատարել, իսկ վերջին՝ յոթերորդ քայլի ժամանակ՝ 60,9%-ով: Բացի այդ Հոսմեր և Լեմեշով տեստի արդյունքները ցույց են տալիս, որ առաջին քայլի համեմատ՝ իսի քառակուսի գործակցի արժեքը փոքրացել է և մեծացել է նշանակալիությունը:

- Մոդելի արդյունքում ստացված տվյալների վերաբերյալ կարելի է նշել, որ
- Եթե տնային տնտեսության ֆինանսական վիճակը մեկ մակարդակով ավելանում է, ապա շանսերը, որ հարցվողը կմասնակցի կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, մեծանում է 1,151-անգամ:
 - Որքան տարիքը մեծանում է, շանսերը, որ մարդիկ կմասնակցեն կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, փոքրանում է:
 - Մոդերնիզացիայի մակարդակի աճի հետ մեկտեղ (գյուղ, քաղաք, Երևան) շանսերը, որ մարդիկ կմասնակցեն կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, մեծանում է:
 - *«Թերթերի հասանելիություն ունեցող»* հարցվողների շանսերը կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցելու 1,618 անգամ ավելի մեծ են, քան համապատասխանաբար *«Թերթերի հասանելիություն չունեցող»* հարցվողների շանսերը:
 - *«Ինտերնետի հասանելիություն ունեցող»* հարցվողների շանսերը կոռուպցիայի դեմ պայքարին մասնակցելու 2,059 անգամ ավելի մեծ են, քան *«Ինտերնետի հասանելիություն չունեցող»* հարցվողների շանսերը:
 - Կրթության մակարդակի աճի հետ մեկտեղ՝ շանսերը, որ մարդիկ կմասնակցեն կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում, մեծանում է:

Կառուցվել է ևս մեկ մոդել, որի մեջ որպես կախյալ փոփոխական օգտագործվել է ապագայում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ նախաձեռնելու մարդկանց պատրասակատամությունը գնահատող (Q42) հարցը, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ նախորդ մոդելում օգտագործված փոփոխականները:

Այս դեպքում ևս փոփոխականները մոդելի մեջ ներմուծելու արդյունքում մոդելն ավելի լավացել է, քանի որ առանց անկախ փոփոխականների, մոդելը 82,5%-ով է ճիշտ կանխատեսում կատարել, իսկ վերջին՝ վեցերորդ քայլի ժամանակ՝ 82,7%-ով:

Այս մոդելի կիրառման արդյունքում ստացվում է, որ այն գործոնները, որոնք նախորդ մոդելում կանխատեսող փոփոխականներ էին հանդիսանում՝ տարիքը, բնակության վայրը, թերթերի հասանելիությունը, կրթությունը, գրեթե չեն փոխվել: Ի տարբերություն նախորդ մոդելի, այստեղ կանխատեսող փոփոխականներ են հանդիսանում նաև սեռը (D1) և կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումները (Q62):

- Եթե կյանքի ընթացքի լիովին վերահսկման մասին մարդու պատկերացումները մեկ սանդղակով բարձրանում են, ապա շանսերը, որ հարցվողը ապագայում հակակոռուպցիոն քայլեր կնախաձեռնի, ևս մեծանում են:
- Ապագայում հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնելու *կանանց* շանսերը 0,718 անգամ ավելի փոքր են, քան *տղամարդկանց* շանսերը:

Ինչպես արդեն նշվել է, լոգիստիկ ռեգրեսիայում խոսքը շանսերի մասին է, բայց կարելի է խոսել նաև հավանականությունների մասին:

$$\log(\text{odds}) = \text{logit}(P) = \ln\left(\frac{P}{1-P}\right)$$

$$\ln\left(\frac{P}{1-P}\right) = a + bX$$

$$\frac{P}{1-P} = e^{a+bX}$$

$$P = \frac{e^{a+bX}}{1 + e^{a+bX}}$$

Վերը նշված բանաձի օգնությամբ հնարավոր է որոշակի կոնկրետ բնութագրիչներ ունեցող մարդկանց համար հաշվարկել, թե որքան է հավանականությունը, որ անձն ապագայում հակակոռուպցիոն քայլեր կնախաձեռնի: Ենթադրենք, թե անձը

- ունի կյանքի ընթացքի լիովին վերահսկման մակարդակ (Q62=9)
- պատկանում է 18-30 տարիքային խմբին (AGE_GR=1)
- ապրում է Երևանում (URBAN=3)
- ունի թերթերի հասանելիություն (DAILY=1)
- ունի բարձրագույն կամ հետբուհական կրթություն (EDU_GR=4)
- ունի հեռուստատալիքների հասանելիություն (TV=1)
- և տղամարդ է (D1(1) = 1)

Այս դեպքում կարելի է ստանալ.

$$e^{a+bx} = e^{-1,353+0,084*9+(-0,141*1)+0,382*3+0,464*1+0,266*4+0,767*1+(-0,331*1)} = e^{2.372} = 10.72$$


$$P = 10.72 / (1 + 10.72) = 0.91$$

Այսինքն, կա բավականին մեծ հավանականություն, որ տվյալ բնութագրիչներ ունեցող անձն ապագայում կնախաձեռնի հակակոռուպցիոն միջոցառումներ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ հաշվարկի ժամանակ ընդգրկվել են բոլոր այն բնութագրիչները, որոնք, ըստ մոդելի, հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնելու ավելի մեծ շանսեր ունեն:

Այսպիսով, կիրառված մոդելի արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում մասնակցության վրա էապես ազդում է հարցվողների տարիքը, բնակության վայրը, տեղեկատվության հասանելիությունը, կրթության մակարդակը: Առանձին մոդելների կիրառման դեպքում ազդեցություն է գործում նաև սեռը, ֆինանսական վիճակը և կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումները: Կանխատեսող գործոններ չհանդիսացող փոփոխականների վերաբերյալ կարելի է նշել, կիրառված երկու մոդելների դեպքում էլ նման փոփոխականներ են հանդիսացել հարցվողների զբաղվածության բնույթը և սոցիալական կապերի առկայությունը:

«Նորարարությունների տարածումը» հետազոտական ավանդույթում վարքագծի փոփոխության գործընթացը պատկերվում է ՀԻՆԳ հիմնական քայլերի միջոցով:

Կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ դիրքորոշումները



Այն հարցվողները, ովքեր երեք դրսևորումներն էլ միաժամանակ կոռուպցիոն դրսևորում են համարում	25%
--	-----

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հարցվողների միայն 25%-ն է վերը նշված, հասարակության կողմից միանշանակ չդիտվող դրսևորումները կոռուպցիոն համարել: Այսինքն, կարելի է փաստել, որ այսօր հասարակության միայն 25%-ն է առավել անհանդուրժականորեն տրամադրված կոռուպցիայի նկատմամբ: Եվ հայ հասարակությունը այսօր գտնվում է կոռուպցիայի նկատմամբ անհանդուժողական վերաբերմունքի ձևավորման փուլում: Ինչպես պարզ և դառնում «Վարքագծի փոփոխման ընթացքը» պատկերից, այդ փուլում հաջողության հասնելու համար որպես ազդեցության մեխանիզմներ կարող են օգտագործվել ինպես ՁԼՄ-ները, այնպես էլ միջանձնային/հավասարների հետ հաղորդակցումը:

Ամփոփում և առաջարկություններ

Հակակոռուպցիոն պայքարում քաղաքական կամքի ձևավորման աշխատանքը չի ավարտվում կառավարության կողմից բարեփոխումների կուրսի որդեգրմամբ: Հակակոռուպցիոն բարեփոխումների հաջողությունը կան տապալունը պայմանավորված է նրանով, թե որքանով է առկա քաղաքական կամք և որքանով է այդ կամքը պահպանվում քաղաքական ու վարչական ղեկավարության, մասնավոր ոլորտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Հաճախ անհրաժեշտ է լինում այդ կուրսը պահպանել՝ դրան հաջորդած դժվարին ժամանակների ընթացքում: Լայն հանրային մասնակցության ապահովման միջոցով է միայն հնարավոր հասնել ձեռնարկված հակակոռուպցիոն բարեփոխումների հաջողման: Պայքարը հաջողության չի հասնի միայն ինստիտուցիոնալ և իրավական միջոցառումներով: Բոլորը պետք է ընդգրկվեն գործընթացներում, այլընտրանք, այսինքն՝ ոչինչ չանել, գոյություն չունի: Որովհետև, հակառակ դեպքում, կոռուպցիան ավելի կտարածվի և վերջնականապես կտապալի կառավարության և, ի վերջո, պետության օրինականությունը:

Հակակոռուպցիոն գործունեության մեջ հանրային ավելի մեծ մասնակցություն ապահովելու համար նշանակալի է «Վաղ որդեգրողների» առանձնացումը և կոնկրետ

նրանց ուղղված նպատակային միջոցառումների իրականացումը: Քանզի այն բանից հետո, երբ տվյալ խմբի ներկայացուցիչներն էլ ավելի հստակ կգիտակցեն կոռուպցիայի վտանգավորությունը, անհանդուժողականորեն կտրամադրվեն երևույթի նկատմամբ և պատրաստ կլինեն կոնկրետ պրոակտիվ քայլեր ձեռնարկել՝ կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար, մյուս խմբերի ներկայացուցիչները, կամա թե ակամա, կսկսեն հետևել նրանց օրինակին:

«Վաղ որդեգրողներին» առանձնացնելիս և կոնկրետ նրանց ուղղված նպատակային միջոցառումներ իրականացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մասնակիցների

- սեռային, տարիքային պատկանելությանը,
- բնակության վայրին,
- տեղեկատվության հասանելիությանը,
- կրթության մակարդակին,
- ֆինանսական վիճակին,
- կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումներին:

Շատ կարևոր է նաև հետևողականություն դրսևորել հետևյալ միջոցառումների իրականացման մեջ

1. Երկրում իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումների, ձեռքբերումների, առկա իրավիճակի մասին ավելի լայն լուսաբանում ապահովել տարբեր ՁԼՄ-ների միջոցով:
2. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել դրական փորձի լուսաբանմանը:
3. Յուրաքանչյուր հանրային միջոցառում զուգակցել կոնկրետ մշակված ուղերձով:
4. Համապատասխան աջակցության ցուցաբերել յուրաքանչյուր հակակոռուպցիոն գործունեություն նախաձեռնած անձի:
5. Հնարավորության ստեղծել, որ դրական փորձ ունեցած անձինք և «Վաղ որդեգրողները» իրենց հմտություններն ու փորձը փոխանցեն մյուսներին:

Հավելված 1

Հարցաթերթում ներառված հարցերի խմբավորումները և տվյալների բազայում կատարված փոփոխությունները

Անկախ Փոփոխականներ

Հարցվողների տարիքը

Առանձնացվել է 4 խումբ՝ որոնց մեջ համապատասխանաբար ընդգրկվել են 18-30(1), 31-45(2), 46-60(3), 61 և ավելի(4) տարիքային խմբերին պատկանող հարցվողները: Նման բաժանում կատարվել և նաև Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից կատարված վերլուծության ժամանակ: Խմբավորումը չի փոխվել իդենտիֆիկացումը պահպանելու համար:

Բնակության վայրը

Բնակչությանը միայն քաղաքային, գյուղական խմբերի բաժանելու փոխարեն սույն վերլուծության ժամանակ բաժանումը կատարելիս քաղաքային բնակչությունից հանվել են երևանաբնակ հարցվողները՝ ստեղծելով առանձին խումբ. գյուղ(1), քաղաք(2), Երևան(3): Նման խմբավորման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ Երևանը, որպես մայրաքաղաք, որտեղ կենտրոնացած են հիմնական տեղեկատվական հոսքերը, իր մոդեռնիզացման մակարդակով տարբերվում է հայաստանյան մյուս քաղաքներից: Հետևաբար, այդքան էլ նպատակահարմար չէ երևանաբնակ հարցվողներին դիտարկել մյուս քաղաքաբնակ հարցվողների հետ միասին:

Ձբաղվածության բնույթը

Հարցաթերթում ընդգրկված D7 հարցը խմբավորվել է հետևյալ կերպ. «Աշխատում եմ լրիվ դրույքով», «Աշխատում եմ մեկ աշխատավայրում», «Աշխատում եմ մեկից ավելի աշխատավայրում» պատասխաններն ընտրած հարցվողներն ընդգրկվել են «Աշխատողներ»(1) խմբում, իսկ «Չեմ աշխատում, աշխատանք եմ փնտրում», «Չեմ աշխատում, աշխատանք չեմ փնտրում», «Թոշակառու», «Ուսանող», «Տնային տնտեսուհի» պատասխաններն ընտրած հարցվողներն ընդգրկվել են «Չաշխատողներ»(2) խմբում:

Սոցիալական կապերի առկայություն

Հարցաթերթում ընդգրկված Q63 հարցը (Ունե՞ք ընտանիքի անդամ կամ մոտ ազգական, որն աշխատում է «Տեղական կամ համապետական կառավարման մարմիններում», «Ոստիկանությունում», «Խոշոր միջազգային կազմակերպությունում կամ ընկերությունում») խմբավորվել է հետևյալ կերպ: Այն հարցվողները, ովքեր նշել են, որ նման կառույցներից առնվազն մեկում աշխատող ընտանիքի անդամ կամ մոտ ազգական ունեն, առանձնացվել են՝ որպես «Սոցիալական կապեր ունեցողներ»(1), իսկ մյուսները՝ որպես «Սոցիալական կապեր չունեցողներ»(0):

ՁԼՍ-ների հասանելիությունը

ՁԼՍ-ների հասանելիությունը գնահատելու համար կիրառվել է Q14a հարցը: Ընդ որում, առանձնացվել են մի քանի խմբեր՝ «Հեռուստատվիզիայի հասանելիություն», «Ռադիոյի հասանելիություն», «Թերթերի հասանելիություն», «Ինտերնետի հասանելիություն»: Բացի հարցաթերթում նշված տարբերակներից, հարցվողներն իրենք նշել էին որոշ լրատվամիջոցներ, որոնցից օգտվել են վերջին 12 ամիսների ընթացքում: Այն հարցվողները, ովքեր նշել են, որ վերջին 12 ամիսների ընթացքում

օգտվել են առնվազն մեկ հեռուստատալիքից, խմբավորվել են որպես «Հեռուստատալիքների հասանելիություն ունեցողներ»(1), իսկ մյուսները՝ որպես «Հեռուստատալիքների հասանելիություն չունեցողներ»(0): Նման կերպ ձևավորվել են նաև խմբեր ռադիոյի, թերթերի, ինտերնետի հասանելիության առանձնացման համար:

Կրթության մակարդակը

Այս խմբի առանձնացման համար կիրառվել է D4 հարցը: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոգիստիկ ռեգրեսիոն մոդելում ցանկալի է որպես անկախ փոփոխական կիրառել այնպիսի հարցեր, որոնք եթե զույգային չեն, ապա ունեն քիչ պատասխանների տարբերակներ, ուստի այս հարցը ևս խմբավորման է ենթարկվել: Այն հարցվողները, ովքեր «Չունեն տարրական կրթություն», «Ունեն տարրական կրթություն» և «Ունեն թերի միջնակարգ կրթություն», ընդգրկվել են *առաջին* խմբում, «Լրիվ միջնակարգ կրթություն» ունեցողները՝ *երկրորդ* խմբում, «Միջնակարգ տեխնիկական կրթություն» և «Թերի բարձրագույն կրթություն» ունեցողները՝ *երրորդ* խմբում, իսկ «Բարձրագույն կրթություն» և «Ետբուհական գիտական աստիճան» ունեցողները՝ *չորրորդ*:

Կյանքի ընթացքի վերահսկման մասին պատկերացումները, ֆինանսական վիճակը, սեռը

Վերը նշված հարցերը խմբավորումների չեն ենթարկվել և օգտագործվել են հարցաթերթում ընդգրկված տարբերակով:

Կախյալ Փոփոխականներ

Լոգիստիկ ռեգրեսիոն մոդելը ենթադրում է որպես կախյալ փոփոխականներ այնպիսի հարցերի կիրառում, որոնք արտահայտում են երևույթի առկայություն կամ բացակայություն: Հետևաբար՝ այն հարցերը, որոնք վերլուծության մեջ կիրառվել են որպես կախյալ փոփոխականներ, բերվել են համապատասխան տեսքի:

Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ և պետական կառավարման համակարգով

Հարցաթերթի մեջ ներառված Q1 հարցում «Շատ են հետաքրքրված» և «Որոշ չափով են հետաքրքրված» տարբերակները խմբավորվել են «Քաղաքականությամբ հետաքրքրվածների»(1), իսկ «Քիչ են հետաքրքրված» և «Բոլորովին հետաքրքրված չեն» տարբերակները՝ «Քաղաքականությամբ չհետաքրքրվածների»(0) խմբերում:

Կոռուպցիայի լրջության գնահատումը

Այն հարցվողները, ովքեր հարցաթերթի Q5 հարցի առնչությամբ նշել են, թե «Կոռուպցիան շատ լուրջ խնդիր է», ընդգրկվել են «Կոռուպցիան շատ լուրջ գնահատողների»(1), իսկ մյուս տարբերակները ընտրած հարցվողները՝ «Կոռուպցիան շատ լուրջ չգնահատողների»(0) խմբում:

Կոռուպցիան կրճատելու հնարավորությունը

Այն հարցվողները, ովքեր Q8 հարցի վերաբերյալ կարծում են, որ «Կոռուպցիան առհասարակ չի կարող կրճատվել» և «Կոռուպցիան կարող է կրճատվել միայն որոշ չափով», խմբավորվել են «Կոռուպցիայի դեմ պայքարը անհմաստ համարողների»(0) խմբում, իսկ այն հարցվողները, ովքեր համարում են, որ «Կոռուպցիան կարող էականորեն կրճատվել» և «Կոռուպցիան կարող է ամբողջովին վերացվել»՝ «Կոռուպցիայի դեմ պայքարը էական համարողների»(1) խմբում:

Կոռուպցիոն դրսևորումների ընկալումները

Հարցաթերթում ընդգրկված են եղել մի խումբ հարցեր (Q15_a-ից Q15_k), որոնք հնարավորություն են տալիս չափելու հարցվողների ընկալումները կոռուպցիայի որոշակի դրսևորումների նկատմամբ: Հարցման արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ կոռուպցիայի որոշ դրսևորումներ համարվում են հանդուրժելի կամ նույնիսկ ընդունվում են որպես նորմալ երևույթ, իսկ որոշ դրսևորումների նկատմամբ հասարակությունը խիստ անհանդուրժողական է տրամադրված. մասնավորապես՝ ցանկալի վճիռ ստանալու համար դատավորին վճարելը: Սակայն հարցման արդյունքները ցույց են տալիս նաև, որ այսօր կան կոռուպցիայի որոշ դրսևորումներ, որոնց նկատմամբ հարցվողների կարծիքները միանշանակ չեն եղել, կարծիքները բաշխվել են գրեթե հավասարաչափ: Այսպես՝ հատուկ խնամք ստանալու համար բժշկին նվեր տալը հարցվողների մոտ կեսը՝ 48.3%-ը, կոռուպցիոն գործունեություն չի համարում, իսկ մյուս կեսը՝ 49,4%-ը, համարում է: Նույն կերպ հարցվողների կարծիքները կիսվել են նաև թոշակների ստացման համար փոքր ոչ պաշտոնական վճարումներ կատարելու (Q15_h) և աշխատանքի տեղավորելու համար պետական պաշտոնյայի երաշխավորմանն առնչվող (Q15_l) հարցերի ժամանակ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ այն հարցվողները, ովքեր վերը նշված երեք գործունեությունները միաժամանակ կոռուպցիոն են դիտում, ավելի անհանդուրժողական են տրամադրված կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ, քան մյուսները: Ընդ որում, հետազոտության արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ հարցվողների միայն 25,4%-ն է վերը նշված երեք գործունեությունները միաժամանակ կոռուպցիոն համարում: Այսպիսով, սույն վերլուծության ժամանակ, ըստ այդմ, առանձնացվել է կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ համեմատաբար «*Հանդուրժողների*»(0) և «*Անհանդուրժողների*»(1) խմբեր:

Կոռուպցիոն գործընթացների մեջ չընդգրկվելու պատրաստականությունը

Կոռուպցիոն գործընթացների մեջ չընդգրկվելու պատրաստականությունը չափվել է Q19, Q21, Q22 և Q24 հարցերի միջոցով: Կան մարդիկ, ովքեր պատրաստ են առաջարկի դեպքում հրաժարվել կաշառքից, քանի որ դա անընդունելի են համարում իրենց համար (այս խումբը կազմում է ընդհանուր հարցվողների 52.5%-ը): Այս խմբին մենք պայմանականորեն անվանել ենք «*Կաշառքից հրաժարվողներ*»(1), ի տարբերություն մյուսների, ովքեր պատրաստ են կաշառք վերցնել: Իսկ այն մարդիկ, ովքեր պատրաստ են կաշառք չտալ ցանկացած պարագայում, քանի որ դա անընդունելի են համարում իրենց համար, կազմել են ընդհանուր հարցվողների 23%-ը: Այս խմբին պայմանականորեն մենք անվանել ենք «*Կաշառք չստվողներ*»(1):

Կոռուպցիոն գործընթացների մեջ չընդգրկվելու պատրաստականությունը կարելի է գնահատել նաև Q30_c, Q30_d և Q30_e հարցերի միջոցով: Այն մարդկանց, ովքեր երբեք իրենք գումար կամ նվեր չեն տալիս կամ «լավություն» չեն անում պետական պաշտոնյային, կարելի է համարել «*Կոռուպցիոն գործընթացների մեջ չընդգրկվողներ*»(1), ի տարբերություն մյուսների, ովքեր միշտ, հիմնականում կամ հազվադեպ դիմում են նման գործողությունների:

Կոռուպցիայի դեմ պայքարի մասնակցությունը

Կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում հարցվողների մասնակցության գնահատման համար խմբավորման է ենթարկվել Q33 հարցը: Այն հարցվողները, ովքեր նշել են, որ Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար անձամբ իրենք «*Ոչինչ անել չեն կարող*», խմբավորվել են «*Կոռուպցիայի դեմ չպայքարողներ*»(0) խմբում: Իսկ այն մարդիկ, ովքեր նշել են առնվազն մեկ քայլ, որ իրենք կարող են ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարելու համար, ընդգրկվել են «*Կոռուպցիայի դեմ պայքարողներ*»(1) խմբում:

Նույն կերպ խմբավորման են ենթարկվել նաև Q42 և Q43 հարցերը: Այն մարդիկ, ովքեր նշել են առնվազն մեկ գործողություն, որը իրենք նախաձեռնել են կամ կնախաձեռնեն կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով, առանձնացվել են «*Հակակոռուպցիոն քայլեր նախաձեռնողների/նախաձեռնածների*»(1) խմբում, իսկ այն մարդիկ, ովքեր երբեք որևէ գործողություն չեն նախաձեռնել և չեն նախաձեռնի՝ առանձնացվել են «*Հակակոռուպցիոն քայլեր չնախաձեռնողների/չնախաձեռնածների*»(0) խմբում:

Կատարված պրոակտիվ քայլերը

Արդեն իսկ կատարված պրոակտիվ քայլերի գնահատման համար ընտրվել են այն հարցվողները, ովքեր Q61_3-ից Q61_9 հարցի ժամանակ նշել են, որ վերջին 12 ամիսների ընթացքում մասնակցել են առնվազն մեկ միջոցառման: Ըստ այդմ, առանձնացվել է «*Ակտիվ մասնակիցների*»(1) խումբը, իսկ այն մարդիկ, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում որևէ միջոցառման չեն մասնակցել՝ առանձնացվել են «*Պասիվների*»(0) խմբում: Ընդ որում, Q61_1 և Q61_2 հարցերի պատասխանները չեն ներառվել վերլուծության մեջ, քանի որ տվյալ գործողությունները ենթադրում են կատարված իրադարձությունների միայն պասիվ քննարկում, այլ ոչ թե կոնկրետ գործողության մեջ ակտիվ մասնակցություն:

Տվյալների բազայում կատարված որոշակի փոփոխությունների

Հարցաթերթում ընդգրկված են եղել որոշ ստուգիչ հարցեր, որոնք թույլ են տալիս դուրս բերել այն հարցվողներին, ովքեր հարցմանն անփութորեն են վերաբերել: Մասնավորապես եղել են հարցվողներ, ովքեր Q22 և Q24 հարցերի ժամանակ նշել են, որ ոչ մի պարագայում կաշառք չեն տա, քանի որ դա անընդունելի են համարում իրենց համար, սակայն Q30_c, Q30_d կամ Q30_e հարցերի ժամանակ նշել են, որ միշտ կամ հիմնականում իրենք են գումար կամ նվեր տալիս պետական պաշտոնյային: Նման անհամապատասխանությունների պարագայում, տվյալ հարցվողների պատասխանները վերլուծության մեջ ներառելը կարող է բերել սխալ եզրահանգումների:

Հետևաբար, սույն վերլուծության մեջ նմանատիպ հակասություններ պարունակող հարցերի պատասխանները չեն դիտարկվել և այս հարցերի պատասխանները գումարվել է «*Դժվարանում են պատասխանել*» տարբերակն ընտրած հարցվողների պատասխանների թվին:

Նմանատիպ անհամապատասխանություն եղել է նաև Q14_a_22-ից Q14_a_26 հարցերի և Q12_4 հարցի միջև: Երբ որոշ հարցվողներ նշել են, որ օգտվել են էլեկտրոնային լրատվամիջոցներից, սակայն մյուս հարցում նշել են, որ ինտերնետից ու էլեկտրոնային փոստից օգտվելու տարրական գիտելիքներ չունեն:

Եղել են հարցվողներ, ովքեր Q33 հարցում նշել են, որ անձամբ իրենք ոչինչ չեն կարող անել կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար, բայց միաժամանակ նշել են նաև կոնտրետ քայլ՝ ուղղված կոռուպցիայի հաղթահարմանը:

Այս հարցերի դեպքում ևս սույն վերլուծության ժամանակ կիրառվել է վերը նշված մոտեցումը:

Հավելված 2

Կիրառված լոգիստիկ ռեգրեսիոն մոդելների և ստացված քանակական տվյալների մասին ավելի մանրամասն տեղեկատվություն

Երկակի փոփոխականների դեպքում խոսքը ինչ-որ մի իրադարձության մասին է, որը կարող է տեղի ունենալ կամ տեղի չունենալ: Լոգիստիկ ռեգրեսիան հաշվում է իրադարձության տեղի ունենալու հավանականությունը՝ կախված անկախ փոփոխականների արժեքներից:

Հնարավորությունը (likelihood) կարող է արտահայտվել կամ հավանականությունների, կամ շանսերի միջոցով:

Երևույթի տեղի ունենալու Հավանականությունը (probability - P) այն է, թե որքան ենք ակնկալում տեսնել երևույթը՝ բազմաթիվ փորձեր կատարելու ժամանակ:

Շանսերը (odds) իրենցից ներկայացնում են երևույթի տեղի ունենալու հավանականությունը, բաժանած երևույթի տեղի չունենալու հավանականության վրա:

$$odds = \frac{P}{1 - P}$$

Ընդ որում, չպետք է շփոթել զրոյական հիպոթեզի ստուգման ժամանակ կիրառվող նշանակալիության p արժեքը, հավանականությունն արտահայտող P արժեքի հետ:

Լոգիստիկ ռեգրեսիայում խոսքը հենց շանսերի մասին է, քանի որ մոդելում կիրառվող կախյալ փոփոխականը լոջիթ է, որը բնական լոգարիթմ է շանսերի (*logit*, which is the natural log of the odds)

$$\log(odds) = \text{logit}(P) = \ln\left(\frac{P}{1 - P}\right)$$

$$\text{logit}(P) = a + bX$$

Կոռուպցիայի դեմ պայքարում մարդկանց մասնակցությունը գնահատող հարցի (Q33) և կոռուպցիան գնահատող մի շարք այլ հարցերի միջև առկա կապի բնույթը պարզելու համար կիրառված լոգիստիկ ռեգրեսիոն մոդել

Մոդելը կառուցվել է 1426 հարցվողների պատասխանների հիման վրա, քանի որ տվյալ հաշվարկման համար բազայից դուրս են բերվել այն հարցվողները, ովքեր Q33 և Q1 հարցերի համար նշել են «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակը կամ ընդհանրապես պատասխան չեն տվել:

Մոդելում ներառվել են Q1_NEW, Q5_NEW, Q15_NEW, Q19_NEW, Q22_NEW, Q30_NEW, Q42_NEW, Q43_NEW, Q61_NEW հարցերը:

Հավասարման մեջ ներգրավված փոփոխականներ

Step		B	S.E.	Wald	df	Sig.	Exp(B)
4(a)	Q43_NEW	,231	,119	3,732	1	,053	1,260
	Q42_NEW	1,539	,183	71,028	1	,000	4,659
	Q22_NEW	,295	,142	4,348	1	,037	1,343
	Q19_NEW	,401	,120	11,194	1	,001	1,493
	Q1_NEW	,440	,116	14,522	1	,000	1,553
	Q61_NEW	,532	,145	13,415	1	,000	1,702
	Constant	-2,136	,188	129,246	1	,000	,118

Հոսմեր և Լեմնշով թեստ

Step	Chi-square	df	Sig.
1	8,700	8	,368
2	8,493	8	,387
3	7,692	8	,464
4	7,806	8	,453

Կոռուպցիայի դեմ պայքարի մասնակցությունը գնահատող հարցի և «Վաղ որդեգրողներ» խմբին պատկանելությունը պայմանավորող գործոնների միջև առկա կապի բնույթը պարզելու համար կիրառված լոգիստիկ ռեգրեսիոն մոդել

Մոդելը կառուցվել է 1284 հարցվողների պատասխանների հիման վրա, քանի որ տվյալ հաշվարկման համար բազայից դուրս են բերվել այն հարցվողները, ովքեր Q33, D9, Q62 և EDU_GR հարցերի համար նշել են «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակը, կամ ընդհանրապես պատասխան չեն տվել:

Հավասարման մեջ ներգրավված փոփոխականներ

Step		B	S.E.	Wald	df	Sig.	Exp(B)
7(a)	D9	,141	,055	6,553	1	,010	1,151
	AGE_GR	-,110	,056	3,827	1	,050	,896
	URBAN	,206	,078	6,993	1	,008	1,229
	DAILY	,481	,143	11,264	1	,001	1,618
	INTERNET	,722	,358	4,057	1	,044	2,059
	EDU_GR	,251	,068	13,766	1	,000	1,286
	Constant	-1,578	,285	30,744	1	,000	,206

a Variable(s) entered on step 1: Q62, D9, AGE_GR, URBAN, SOC_REL, RADIO, DAILY, INTERNET, EDU_GR, EMP_GR, TV, D1.

Հոսմեր և Լեմնշով թեստ

Step	Chi-square	df	Sig.
1	7,086	8	,527
2	5,459	8	,708
3	6,097	8	,636
4	5,985	8	,649
5	7,929	8	,440
6	8,859	8	,354
7	6,068	8	,640

Ապագայում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ նախաձեռնելու մարդկանց պատրասկատամությունը գնահատող հարցի և «Վաղ որդեգրողներ» խմբին պատկանելությունը պայմանավորող գործոնների միջև առկա կապի բնույթը պարզելու համար կիրառված լոգիստիկ ռեգրեսիոն մոդել

Մոդելը կառուցվել է 1370 հարցվողների պատասխանների հիման վրա, քանի որ տվյալ հաշվարկման համար բազայից դուրս են բերվել այն հարցվողները, ովքեր D9, Q62 և EDU_GR հարցերի համար նշել են «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակը, կամ ընդհանրապես պատասխան չեն տվել:

Հավասարման մեջ ներգրավված փոփոխականներ

		B	S.E.	Wald	df	Sig.	Exp(B)
Step	Q62	,084	,031	7,585	1	,006	1,088
6(a)	AGE_GR	-,141	,069	4,185	1	,041	,868
	URBAN	,382	,095	16,339	1	,000	1,466
	DAILY	,464	,206	5,097	1	,024	1,591
	EDU_GR	,266	,084	10,020	1	,002	1,305
	TV	,767	,364	4,433	1	,035	2,152
	D1(1)	-,331	,151	4,825	1	,028	,718
	Constant	-1,353	,560	5,837	1	,016	,258

a Variable(s) entered on step 1: Q62, D9, AGE_GR, URBAN, SOC_REL, RADIO, DAILY, INTERNET, EDU_GR, EMP_GR, TV, D1.

Կոռուպցիայի դեմ պայքարի մասնակցությունը գնահատող հարցի (Q33) և մի քանի այլ հարցերի միջև փոխկապակցվածությունը

Հարցեր	Կորելիացիայի գործակից	Խի քառակուսի նշանակալիություն
Q33 և Q1	0,12**	0,00
Q33 և Q19	0,12**	0,00
Q33 և Q42	0,27**	0,00
Q33 և Q43	0,15**	0,00
Q33 և Q61	0,13**	0,00

** կորելյացիան նշանակալի է 0,01 մակարդակում

Կորելիացիան հաշվարկել է 1426 հարցվողների պատասխանների հիման վրա, քանի որ տվյալ հաշվարկման համար բազայից դուրս են բերվել այն հարցվողները, ովքեր Q33 և Q1 հարցերի համար նշել են «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակը, կամ ընդհանրապես պատասխան չեն տվել: